



# Հակոբ Պարոնյան

## Ազգային շոջեր

ՍԱՐԳԻՍ ՊԷՅ ՊԱԼԵԱՆ

Ներելի՞ է արդեօք հեգնական գրիչի մը յանդգնիլ այսպիսի հանճարաւոր եւ հոշակաւոր անձի մը փառքը գրելու՝ զոր կը պատմեն արդէն երեսունէն աւելի հատորներ, որք մեր հրատարակած գիրքերուն պէս թղթակազմ չեն, ոչ ալ լաթակազմ, այլ քարակազմ են: Ա՛րդ, երբ քարերը կ'աղաղակեն, ի՞նչ հարկ կայ, որ տկար փետուր մը այդ հոյակապ շէնքերուն շուրջը տարուբերի:

Փետուրը, պիտի ըսէք, որչափ ալ տկար ըլլայ, ժամանակին հոսանքին առջեւ քարէ աւելի կը դիմանայ, ուստի եւ պէտք է, որ քարերը քիչ մը լոնն եւ գրիչը խօսի: Կը հաւանին, բայց իմ գրիչս այդ քարերուն պէս պիտի կրնա՞յ խօսիլ: Այդ շէնքերը խիստ բարձր են եւ իմ գրիչս, որուն մէկ թեւին փետուրները կտրած են, չէ կարող այնչափ բարձր թռիչ առնուլ, եւ քանի անգամ, որ բարձրանալ փորձէ՝ թաւալգլոր գետինը պիտի իյնայ՝ եւ թերեւս միւս թեւն ալ պիտի կտորէ:

Ուրիշներու պէս, ես ալ համոզուած էի, որ խօսքը բառերէ կը շինուի, իսկ երբ ակնարկ մը կ'ընեն այդ հոյակապ շէնքերուն վրայ, զորս բարձրացուցած է նորին վսեմութիւնը՝ կ'ըսեն. խօսքը քարերէ կը շինուի: Եւ ի՞նչ դրութեամբ եւ արագութեամբ...: Ես ալ երբեմն բառեր կ'առնեմ, կը փոխեմ, կը տեղաւորեմ, նորէն կը հանեմ, տեղը ուրիշ բառ մը կը դնեմ եւ երբ կը կարծեմ, թէ գեղեցիկ խօսք մը շինած եմ՝ կը տեսնեմ, որ նորին վսեմութեան շինած մէկ հաւանոցը իմ շինած խօսքէս շատ աւելի գեղեցիկ եւ վսեմ է: Սակայն իմ գրիչս որչափ ալ անգոր ըլլայ՝ գոնէ անկարող է նսեմացունել նորին վսեմութեան համբաւն, որ,

ինչպես կ'ըսէ խմբագիր մը, քարէ շինուած է: Եւ այս իսկ է, որ կը քաջալերէ գիս, իր կեանքը գրելու:

Սարգիս պէյ Պալեան Բեշիկթաշ ծնած է 1835 փետրուար 17-ին: Բնութիւնն զինք օժտած էր տաղանդով, ազնուութեամբ եւ գեղեցկութեամբ: Այնպիսի համակրական դէմք մը ունէր, որ համբոյրներով կը լեւար: Չուարթ էր, եւ չէր այն մանուկներէն, որք ծնելուն պէս կը սկսին լալ, եւ գորս բնութիւնը կարծես չախելով աշխարհ դրկած է:

1843-ին վերջերը, առաջին անգամ ըլլալով, Բարիզ գնաց եւ երկու տարույ չափ հոն մնալէն ետքը՝ Կ. Պոլիս վերադարձաւ:

1847-ին երկրորդ անգամ գնաց Բարիզ, որ այն ատեն պաշարման վիճակի մէջ էր: Հոն Սենտ Պառայի վարժարանը մտաւ եւ իր շրջանն յաջողութեամբ լրացնելէն ետքը՝ Էքոլ Սանթրալ դրուեցաւ, ուր իր սրամտութեան շնորհիւ քիչ ժամանակի մէջ մեծ յառաջդիմութիւն ընելով՝ Էքոլ տէ Պոզար մտաւ ուր ամբողջացուց արհեստն ու գիտութիւնը:

1855-ին Պոլիս վերադարձաւ, ուր իր երջանկայիշատակ հօրը քովը, սկսաւ իր հանճարը ցոյց տալ արքունական շինութիւններու մէջ:

1866-ին Կարապետ Քալֆա վախճանեցաւ, եւ դրախտաբնակ Սուլթան Ապտ-Իւլ-Ազիզ, որ ինչպէս Կարապետ Քալֆային բարեմասնութիւնները, նոյնպէս ալ Սարգիս պէյին տաղանդը լալ կը ճանաչէր՝ կայսերական պալատին եւ շինութիւններու ճարտարապետ անուանեց նորին վսեմութիւնը:

Այս բարձր պաշտօնին գլուխն անցնելուն պէս, փորձով ցոյց տուաւ նորին վսեմութիւնն, որ Սուլթան Ազիզ լաւագոյն ընտրութիւն մը չէր կրնար ընել: Մենք փոխանակ նորին վսեմութեան երկար բարակ գովեստներ կարդալու՝ կը շատանանք անոր գործերը հոս թուելով.

Պեյերպէյի նոր պալատը,

Չրաղանի նոր պալատը,

Պեյրոզ, Թորաթի քեօշքը,

Հեթին Պաշի Չիֆթիկի քեօշքը,

Ալեմ Տադի քեօշքը,

Գալենտերին քեօշքը,

Յըլտըզի նոր քեօշքը,

Պեյրոզի Էոժէնի կայսրուհոյն համար շինուած շէնքը,

Քեաղըտխանէի պալատը,

Գանտիլի, սուլթաններու պալատը,

Աք Սարայի մզկիթը,

Կիմիշ Սոյի գորանցը,

Ղալաթա Սերայի դպրոցը,

Քեաղըտխանէի մզկիթը,

Վալիտէ Պաղը քեօշքը,

Այազ Աղայի քեօշքը,

Պալ Մոնուի շիֆթիկը,

Չատըր քեօշքը,

Չըրաղանի պահականցը,

Թօփ Գարուի քեօշքը,

Քիշուկ շեքնէնէի քեօշքը,

Իգնիսիտ, սուլթանի ազարակին մէջ շինած գեղջկական շէնքը,

Պեշիկթաշի դպրոցը,

Մաշքայի գինանոցը,

Մաշքայի գորանոցն եւ պահականոցը,

Զինճիրլի Քոյոյի քեօշքը,

Պեշիկթաշի մէջ թաղ մը, կէս քիլոմետրոյ երկայնութեան վրայ:

Այս եւ իւր շինած ուրիշ քանի մը շէնքերն այնչափ արհեստով եւ գիտութեամբ կառուցուած են, որ զանոնք դիտողը կը հիանայ եւ ինքն իրեն կը հարցունէ թէ՛ արդեօք Բարիզէ՞ն բերել տրուած են այս շէնքերը, նման այն մարդուն, որ, չգիտեն ո՛ր, գեղեցիկ շէնք մը տեսնելով՝ քովիններուն հարցուցած է, թէ Եւրոպայի մէ՞ջ շինուած է այս:

Առիթը կարծես միշտ դժուարութիւններ յարուցած է նորին վսեմութեան. որ իւր հանճարովն ամէն դժուարութիւններու յաղթած է: Քեաղըտխանէի պալատն՝ որ երկու հարիւր կանգունի չափ երկայնութիւն եւ վաթսուն կանգունի չափ լայնութիւն ունի, ձմեռուան եղանակի մէջ ջուր կը կոխէ. եւ նորին վսեմութիւնը առանց կարասիքը մէջէն հանելու պալատն մէկ մեթրոյ բարձրութեամբ վեր կ'առնէ: Արնատուտ գիւղի Սուլթան սերայի պատը ճեղքուելով դէպի ծով կը քալէր, նորին վսեմութիւնը թող չտուաւ եւ պատը ստիպուեցաւ հնագանդիլ: Նմանապէս Չրաղանի պալատին քեօշքը, որ դէպի ծով յառաջ կը քալէր՝ անոր հրամանան ստիպուեցաւ դառնալ առջի տեղը: Արքայաբնակ Սուլթան Մէջիտի հետ երբ Սելանիկ գնաց, գիշերուան մը մէջ շինեց ինն մարմարիոնէ աւազան մը, Պեշքընար, ուր նորին վեհափառութիւնն ընդունեց քաղաքի երեւելիները: Միայն մեր մէջ չէ, որ մեծ համբաւ կը վայելէ այս հանճարն, Եւրոպայի մէջ իսկ կը ճանաչեն անոր յարգն: Բարիզ հրատարակուող Լը մոնտ իլիւսթրէ անուն հանդէսն նորին վսեմութեան պատկերը հրատարակելով՝ հետեւեալ տողերը կը գրէ.

«Երեւելի ճամբորդներ, որոնք դեռ նոր այցելած են Կ. Պոլսոյ քաղաքը՝ կը յայտնեն մեզ այն տպաւորութիւնները, զորս իրենց վրայ ներգործած են արհեստով եւ գիտութեամբ բարձրացած այն հոյակապ շէնքերն ու պալատներն, որոնք Վոսփորի երկու ակերը կը զարդարեն: Սքանչացած են իմանալով, որ այս հրաշալիքները սուրբանին հռչակաւոր ճարտարապետ վսեմ. Սարգիս պէյ Պալեանի գործն են:

«Այս տաղանդաւոր անձն ամէնէն աւելի երեւելի ընողն է այն անհաւատալի արագութիւնն, որով հոյակապ շէնքեր կը կանգնէ: Այսպէս Պեյերպէյի պալատն, որ մեր Նուվել օբերա յին պէս փառաւոր եւ մեծ է, երկու տարուան մէջ շինուեցաւ: Յըլտըզի քեօշքը, որ կոփածոյ քարերէ եւ մարմարիոնէ շինուած գողտրիկ գործ մ'է, եւ որ մեր Պիպլիոթեք նասիոնալի մեծութիւնն ունի, վեց ամիսէն քիչ ժամանակի մէջ շինուեցաւ:

«Արագութեամբ գործելու հետ, նորին վսեմութիւնն ունի տեղական պահանջումներուն յարմար տնտեսագիտական եւ վարչական այնպիսի ձիրքեր, որոնց շնորհիւ բոլոր այս շէնքերը մէկ երրորդով կանգնուեցան այն գումարէն, զոր մեր հասարակաց գանձը վճարած է նմանօրինակ շէնքերու համար:

«Հետզհետէ աստիճանէ աստիճան բարձրանալով՝ այսօր կառավարութեան աստիճաններէն բարձրագոյնն ունի, եւ բոլոր վեհապետներն, որ Պոլիս գացած են, փութացած են պատուանշաններով զարդարել անոր լայն կուրծքը եւ առատօրէն նուէրներ ընել անոր:

«Քաղցր վարմունքն, ազնութիւնը, մարդասիրութիւնն եւ ուրիշ բարեմասնութիւնները տաղանդին հետ միանալով՝ նորին վսեմութիւնը ճանչցողներուն համակրութիւնը կը գրաւեն: Իւր գթասրտութիւնն եւ հիւրասիրութիւնն ոչ նուաստ զովեստներու արժանի են:

«Աւելի մեծ հաճութեամբ կը հրատարակենք իւր պատկերն անոր համար, որ նորին վսեմութիւնը Ֆրանսիայի մէջ առած է առաջին ծանօթութիւններն արուեստին՝ զոր այնչափ բարձրացուցած է Թուրքիոյ մէջ»:

Չանց կ'ընենք հոս յիշատակելէ քանի մը տարիներ առաջ մայրաքաղաքիս մէջ հրատարակուած Ռ-ըվի տը Քոնսթանթինոբլ անուն հանդէսին գրած տողերն, որոնք նորին վսեմութեան տաղանդը կը հռչակեն. զանց կ'ընենք, վասն զի իւր գործերն պէտք չունին գովեստի: Թուով խիստ քիչ են մեր ազգին մէջ այսպիսի մարդեր, որոնք իրաւամբ իրենց ազգին փառքն ու պարծանքն են: Արդարեւ շատ են, որ համբաւ ունին, այլ քիչ են, որ անոր արժանի ըլլան: Մարդս հարկ է, որ ինք ունենայ համբաւ. ուրիշի ծախու առնուած համբաւին պէս անարգ բան չկայ: Մին աղքատի մը ողորմութիւն տուած ժամանակը կ'ուզէ, որ բոլոր աշխարհը տեսնէ, եւ թերեւս կը սրդողի, թէ ինչո՞ւ Աժանս հաւաստի գործակալութիւնն հեռագիր չքաշեր Եւրոպա՝ յայտնելով, թէ այսինչ մարդն մուրացկանի մը քսան փարայ տուաւ այսօր: Ուրիշ մը, որ բորբոսնած ոսկիներ ունի, կը հանէ հինգ ոսկի միայն կու տայ սովեալներու Յանձնաժողովին եւ կը պնդէ, որ ազգին մէջ իրմէ աւելի առատաձեռն մարդ չկայ: Սահմանափակ մտքի տէր մէկը հրատարակութիւն մը կ'ընէ, եւ կը սկսի աղաչել իւր բարեկամներուն, որ պէտք եղած գովեստը չզլանան իւր գրքին, որ ամէն բանի արժանի է, բացի գովեստէ: Ուրիշ մը սանդուխէ մը առանց իյնալու իջած ըլլալուն համար, մարմնամարգութեան դասատու ըլլալ կ'ուզէ: Շատերը համբաւոյն ետեւէն կը վազեն եւ այս պատճառաւ կը փախցունեն համբաւն, որ իր ետեւէն վագողը չճանաչելով՝ կը վախնայ ու կը փախչի: Ունի՞ս հանճար կամ առաքինութիւն, համբաւն ետեւէդ կու գայ, եւ որչափ վռնտես՝ այնչափ քեզմէ չբաժնուիր: Վռնտեցէք ուրեմն սա համբաւն քիչ մը ատեն, եւ հետեւեցէք այդ անձին, որու կեանքը կը կարդաք:

Միայն ճարտարապետութեան ասպարէզին մէջ չէ, որ իւր գործերը հաշողութեամբ պսակուած են, ինքը որչափ ճարտարապետ, նոյնչափ ալ մեքենագէտ է. ինչպէս քարերն իւր հրամանով շարուելով ամէնուն հիացումը կը գրաւեն, այնպէս ալ երկաթներն իրարու մէջէն անցնելով՝ ոգի կ'առնեն եւ անուս մարդերու պարծենալով կ'ըսեն. մենք ձեզմէ աւելի օգտակար ենք աշխարհին: Շինած ունի թաւալողական մեքենայ մը, որուն պատկերը հեղինակին անուան հետ տպուած է Արմէնկոյի մէջ, որ մեքենաներու եւ մեքենագէտներու վրայ խօսող հանդէս մ'է: Յիշեալ մեքենային համար արտօնագիր տրուած է նորին վսեմութեան: Քանի մը ատենէ ի վեր կ'աշխատի նոր կաթսայ մը շինել, որ քիչ հանքածուխով կարենայ տաքնալ: Եթէ այս գործն ի գլուխ ելնէ, մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ երկրիս շոգենաւերու ընկերութիւններուն, մանաւանդ

ճամբորդներուն, որոնք երբեմն օրերով կը սպասեն, որ նաւապետն քաղաքէ մը ածուխ գտնէ եւ ճամբան շարունակէ: Արդեօք որչափ օրհնութիւններ պիտի առնէ Խասգիղի շոգենաւէն, որուն մեքենան ձմեռ ատեն, օր մը յանկարծ կայնեցաւ, եւ երբ պատճառը փնտռուեցաւ՝ հասկցուեցաւ, որ ցուրտէն ջուրը սառած էր կաթսային մէջ:

Տան մէջ ունի աշխատարան մը, որ լի է բնագիտութեան եւ տարրալուծական գործիքներով: Շարունակ հոն կ'աշխատի երկու երեք տարիներէ ի վեր եւ բնագիտական ու տարրալուծական փորձերուն կը պարսապի:

Թողունք նորին վսեմութեան աշխատիլ իւր սենեակին մէջ, եւ մենք քիչ մը դուրս ելնենք: Կ'ուզէ՞ք քիչ մը դէպի Պատնաս քալել, ահա քնար ի ձեռին մեր դէմը կ'ելնէ այն անձը, զոր քիչ մը առաջ ճարտարապետ ճանչցանք, վերջը մեքենագէտ, քիչ մը ետքը բնագէտ եւ քիմիագէտ: Ի՞նչ գործ ունի Պատնասայ ճամբուն վրայ. արդեօք պալա՞տ մը շինելու համար կանչուած է հոն: Հաւանական է: Քնար մը ունի քովն, այդ որո՞ւն է, ուսկի՞ց առած է: Ապողոնէն խնդրած եւ առած է, բարեկամ: Պիտի զարմանաս անշուշտ երբ ըսեմ, որ Մայր Արաքսին սրտատուչ եղանակն այդ քնարին պարտաւոր ենք: Աւելորդ է հոս երկարօրէն գրել այն եղանակին վրայ, որ այսօր ամէն հայու բերանն է. սակայն պէտք է խոստովանիլ, որ ոտանաւորին ոգւոյն համապատասխանող եղանակ մը շինելու յաջողած է: Ունինք ուրիշ երաժիշտներ ալ, որոնք միայն եղանակ շինելով կը կարծեն, թէ կը յաջողին, եւ ասոր համար է, որ ազգային թատրերգութիւններուն կամ երգերուն մէջ կը հանդիպինք այնպիսի եղանակներ, որոնք ոտանաւորին հետ բնաւ խնամութիւն չունին: Օրինակի համար, երբ ոտանաւորը կու լայ՝ եղանակը խնդալէն կը ճաթի, եւ երբ եղանակը ննջեցեալ կը տանի՝ ոտանաւորը գինի բերէք կը պոռայ: Այս կերպով դերասան մը երգին խօսքերովը կը լացունէ եւ եղանակովը կը խնդացունէ, կամ, լաւ եւս, ոչ մին կ'ընէ ոչ միւսը: Բացի ասկից շինած ունի Քրիսթոֆ Քոլումպ անուն օբերայի մը եղանակն, որուն վրայօք շատ գովեստով կը խօսի: Պարսպ աշխատութիւն է կրկնելը, թէ նորին վսեմութեան մատներն դաշնակի վրայ ալ հրաշքներ կը գործեն:

Սարգիս պէյ Պալեան իւր զբաղումներուն շատութեանը պատճառաւ՝ չէ կրցած ազգային ժողովներու մէջ մտնել, այսու ամենայնիւ ամէն բարեգործական եւ

մարդասիրական ձեռնարկություններու մէջ կը փայլի իւր նուէրներովը:  
Աւետարանը միայն չէ, որ կը պատուիրէ իրեն ձախ ձեռին շտեսնել աշին  
տուածը, ուրիշ պատճառներ ալ կան, որ կը ստիպեն գինքը գաղտնապէս բարիք  
ընելու:

Քանի մը տարի առաջ՝ Ազգային Պարտուց բարձման համար նուիրեց հազար  
հինգ հարիւր ոսկի, գումար, որ իրեն ընկեր չգտաւ նուիրատուներու ցանկին մէջ:  
Շատ տարիներէ ի վեր Վասպուրականի Մարմնթ գիղի մէջ դպրոց մը հիմնած  
է, եւ որուն ծախքն ինքը կը հոգայ մինչեւ այսօր:

Կարելի չէ համբելով լննցնել այն նամակներն, որոնք ամէն օր կ'ուղղուին իրեն եւ  
որոնք վսեմափայլ տէր ով կը սկսին ու Հաճեցէք ներփակեալ տոմսակներն  
ընդունել ով կը վերջանան: Նորին վսեմութիւնն բնաւ ետ չդարձուներ այս տեսակ  
տոմսակներն, որոնք կամ թատրոն կը հրաւիրեն գինքն կամ պարահանդէս, ուր  
դերասանի մը կամ ազգային հաստատութեան մը կամ ընկերութեան մը ի  
նպաստ ներկայացում կամ պար կը տրուի: Եթէ իւր տուած դրամներուն ցանկն  
հրատարակուի՝ ակներեւ պիտի տեսնուի, որ այս անձը կարծուածէն աւելի  
առատաձեռն է:

Մինչեւ հիմա առատաձեռնութեան շատ փորձեր ցոյց տուած է, եւ կը հաւատանք,  
որ ասկէ վերջն ալ պիտի շարունակէ իւր նուէրներն ազգային մանկտոյն  
դաստիարակութեանը համար:

Հակառակ այն պատուանշաններուն, գորս իւր կուրծքէն կախած են Անգղիայի,  
Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Թուրքիայի, Ռուսիայի եւ այլն  
կառավարութիւններն՝ այսօր հայերէն կը խօսի եւ ազգին բնաւ չարիք մը  
հասուցած չէ: Այսչափ պատուանշաններով զարդարուած մէկն իւր մայրենի  
լեզուն սիրէ՝... Աս քիչ մը անհաւատալի պիտի թուի ամէն անոնց, որ  
դժբախտութիւն ունեցած են տեսնուելու այնպիսի էֆենտիներու կամ պէյերու,  
որոնք եթէ աստիճանէ մը բարձրանան՝ հայերէն չխօսելու ուխտ կ'ընեն. եթէ  
պատուանշան մ'ալ առնեն՝ հայերէն խօսողն ականջէն պատի մը վրայ գամելու  
չափ յառաջ կ'երթան, եւ եթէ քիչ մ'ալ բարձրանան՝ ազգային իրաւունքներն  
աճուրդի կը հանեն, կարծելով, թէ այս ընթացքով աւելի բարձր աստիճաններու  
կը հասնին:



Պաշտպան եւ սիրող է գեղարուեստներու:

Երբ Այվագովսքին մայրաքաղաքս եկաւ, նորին վսեմութենէ հիւրընկալուեցաւ: Կը սիրէ եւ կը քաջալերէ ամէն գեղեցիկ գործերն՝ ինչ սեռէ ալ որ ըլլան:

Գիտութեամբ եւ արհեստով օժտուած ասանկ հոշակաւոր մէկու մը միայն կը վայլէր քիչ մը հպարտութիւն՝ եթէ աս ներելի ըլլար, բայց կը տեսնենք, որ հպարտութեան նշոյլն անգամ չունի իւր վրայ: Իրեն ներկայացուողն ի՛նչ աստիճանէ ալ որ ըլլայ, այնքան անուշութեամբ կ'ընդունուի իրմէ, որ կը սկսի կարմրիլ եւ նեղուիլ: Իրեն դէմն ելնելու համար ժամերով վարի սրահն սպասելու հարկ չկայ, ոչ ալ պէյն այսօր հիւր ընդունելու ժամանակ չունի, ուրիշ օր մը եկուր խօսքը կը լսես: Այսպէս ամէնուն հետ քաղցրութեամբ կը վարուի, իսկ երբ կը տեսնէ, որ դիմացինը, ո՛վ որ ըլլայ, իւր չափը չճանաչեր, այն ատեն փափկութեամբ կ'իմացունէ հպարտութիւն ծախողներուն, որ ուրիշ տեղ երթան իրենց ապրանքը ծախելու:

Որչափ ալ չուզենք, նորին վսեմութեան արժանապատուութիւնը չվիրաւորելու համար, գուգակշռութեան մտնելով իւր առաւելութիւնները յայտնելու՝ ամէնօրեայ դէպքերն կը ստիպեն գմեգ խոստովանիլ, որ մեր ազգին մէջ կան այնպիսի անձեր, որ հպարտութեան գագաթը բարձրացած են. եւ այս անձերն այնպիսի մարդեր են, որ բնաւ իրաւունք չունին... հպարտանալու:

Ասոնց համար ամէնէն սովորական բան մ'է արհեստաւորի մը հետ այնպէս վարուիլ, ինչպէս կը վարուի կռանն երկաթի հետ. դաստիարակի մը հետ խօսիլն աւանակի մը վրայ հեծնելով Երուսաղէմ մտնել է իրենց համար. խմբագրի մը բարեւ տալն անոր պատուանշան տալու չափ արժէք ունի իրենց քովը: Վսեմ Սարգիս պէյ Պալեան մինչեւ այսօր կը պահէ ճարտարապետութեան պաշտօնն եւ ինչպէս սուրբան Ազիզին, նոյնպէս ալ օգոստափառ սուրբան Համիտին հաւատարմութեամբ ծառայելով՝ նորին վեհափառութեան հովանաւորութիւնը կը վայելէ:

Նորին վսեմութիւնը միջին հասակով, սեւ աչերով եւ ընթրիներով, բարեկազմ եւ գեղեցիկ անձ մ'է: Այնպիսի դէմք մը ունի, որ կարծես թէ, եթէ Մուսաս իւր խօսքը պահէ եւ ես յաջողիմ երգիծանքներս աւարտել՝ պիտի կրնամ անոր անձին վրայ

Մեկնասս գտնել: